ժանն էր արդարութեան՝ պատուով և մեծարանօք, որոյ վասն ածին 'ի վերայ իւրեանց զՆորին, և առին զհրովարտակս վասն եկեղեցւոյն Գողգոթայի, ժառանգել զայն անկախ յումեքէ։ Գրեալ 'ի ՀԵ Բէպրվարի ամսոյ, ՌՀՀ (1440)։ Երրորդ հրովարտակ՝ դարձեալ 'ի նոյն Մէլիք Զահր Զագմագէ, գրեալ առ ամենայն գործակալս Երուսաղէմի, իմասան է. եթէ «Հաստատեցէք զեկեղեցականս թագաւորին Վրաց յեկեղեցին Գողգոթայի 'ի տաճարին Ս. Յարութեան, և հրամայեցէք բանալ նոցա զդուռն հարաւային, յորմէ դիւրութիւն ունին նոքա, և արգելջիք զՀայս և զԼատինս չհակառակիլ վասն այնր, զի կատարեալ յանձնեցի նոցա»։ Գրեալ 'ի ՀԲ Մուհարրէմ ամսոյ, ՌՀՄ (1439)։

Յետ ընթերցման հրովարտակացս այսոցիկ, եհարց նախարարն ցժողովեալսն Լատինաց, և նոքա ասեն՝ հարաւային կողմն Գողգոթային, սեփհական է մեզ և մեք տիրեալ եմք նմա. եւ մատուցին հանրագիր ինչ 'ի դատարանէ, իմասան է. Գողգոթայ կոչեցեալ տեղին, և հարաւային խորանն, մին յերից խորանաց, սեփհական է ազգին Լատինաց, որք բնակին 'ի վանս Սիոնի արտաքոյ քաղաքին, ուր կատարեն զպաշտամունս իւրեանց 'ի սկզբանէ մինչեւ ցայսօր. և տիրեալ են տեղւոյն և խորանին յանուն ազգի իւրեանց յազգէ յազգ. չէ օրէն ումեք հակառակիլ ոչ սեղանոյն եւ ոչ պատարագին։ Գրեալ 'ի ԺԱ Զիլհիճէ ամսոյ, ՌՄԶ (1481)(*)։ Հաստատեալ 'ի Շէմսէտտին դատաւորէն Երուսաղէմի եւ 'ի մեծամեծաց։ Յաւելին Լատինք ասել. որովհետեւ ունիմք 'ի ձեռս մեր զայսպիսի մուրհակս, 'ի վկայութիւն սեփհականութեան Լատինաց, եւ տիրեալ եմք նմա. անհնար է մեզ կարձել զձեռս մեր 'ի տեղւոջէն յայնմանէ։ Իսկ կուսակալն և մեծամեծք այլազգեաց զայս ամենայն քննութիւնս պարագայիւք գրեալ ծանուցին Սուլթանին. յԲ Ճէմազիլ ախր ամսոյ, ՉԻԸ (1512)։ Զայս դատաստանական քննութիւն գրեալ յետկարի 'ի նմին ժամանակի, և պահեալ ամբողջ 'ի կարգս գրոց Ս. Աթոռոյս, և առանց խորշելոյ յերկա-

(*) Լատինք այն դատարանի գրով միայն ժառանգեալ են զտեղին զայն, և վասն որ չկարացին հանել գնոսա անտի։